

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Երևան, Արաբկիր, Թբիլիսյան խճուղի 21/5 հասցեում նախատեսվող հասարակական
նշանակության շենքի կառուցման



«ՅՈՒՆԻՓՈՒԼ» ՍՊԸ

Հասցե՝ Երևան, Քոչարյան 6, Բն. 7, 0056

Տնօրեն՝ Վահե Հարությունյան
Ներկայացուցիչ՝ Էլեն Մուրադյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| ՆԱԽԱՏԵՍԿՈՂ ԳՈՐԾՈՒԼԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ | 3 |
| ԳՈՐԾՈՒԼԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ԿԱՐԳՎՎՈՐՈՒՄՆԵՐԸ | 3 |
| ԳՈՐԾՈՒԼԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ և ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ | 6 |
| Ֆիզիկաաշխարհագրական պայմանները..... | 6 |
| Կլիման. | 7 |
| Օդային ավազան | 10 |
| Ջրային ռեսուրսներ | 12 |
| Հողերի նկարագիրը..... | 12 |
| Հողային ռեսուրսներ | 13 |
| Թափոնների կառավարում..... | 17 |
| Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)..... | 17 |
| Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը | 19 |
| Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց | 20 |
| Նախատեսվող աշխատանքների կազմակերպում..... | 20 |
| Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ | 23 |
| Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր | 28 |
| Ռիսկերի գնահատում..... | 29 |
| Արտանետումների աղբյուրները..... | 29 |
| Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն | 30 |
| Մթնոլորտային օդ..... | 30 |
| Ջրային ռեսուրսներ | 31 |
| Հողային ռեսուրսներ | 31 |
| Աղմուկ | 34 |
| Մշտադիտարկումների իրականացման պլան..... | 34 |
| ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂԱՎՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ | 36 |
| ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ | 39 |

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսալրրոտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Հասարակական նշանակության շինության նախագիծը նախատեսվում է իրականացնել Երևան, Արաբկիր, Թբիլիսյան խճուղի 21/5 հասցեում:

Հասարակական նշանակության շինության աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից հասարակական շինություն. 1 ստորգետնյա և 3 վերգետնյա հարկերով գրասենյակային և պահեստային տարածքներ:

2023թ.-ի մայիսի 3-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Հասարակական նշանակության շինության աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս հայտը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

- **ՀՀ Սահմանադրություն (2015թ. փոփոխություններով)** - 12-րդ հոդվածը սահմանում է, որ Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:
- **«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014)** - բաղկացած է ՀՀ-ում տարբեր բնույթի ծրագրերի և գործունեությունների համար ՇՄԱԳ-ի գործընթացի հիմնական քայլերից: Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար:
- **«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք 03. 05. 2023 /ՀՕ-150-Ն/**
- **«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.)** - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:
- **«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)** - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:
- **«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ)** - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:
- **«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)** - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում

վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

- **«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005)** - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:
- **«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)** - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6): Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014): ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ: Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:
- **«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք / ՇՕ-211, 27. 11. 2006/**
- **«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք / ՇՕ-52, 03. 04. 2000/**
- **«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք / ՇՕ-22, 23. 11. 1999թ. /**
- **ՀՀ Կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29. 01. 2010թ. -ի N71-Ն որոշում,**
- **ՀՀ Կառավարության 14. 08. 2014թ. -ի N781-Ն որոշում,**
- **ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:**

- **ՀՀ «Ջրային օրենսգիրք» (2002)** – կարգավորում է ՀՀ-ում ջրային հարաբերությունները:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ և ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

Հասարակական նշանակության շինության նախագիծը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի, Արաբկիր վարչական շրջանի, Թբիլիսյան խճուղի 21/5 հասցեում: Հողատարածքը գտնվում է հասարակական շենքերի, ազատ տարածքների, շինությունների և ճանապարհի հարևանությամբ: Նախատեսվող գործունեության տարածքի հարևանությամբ առկա են երեք կառույցներ. ջրամեկուսացմամբ, ձայնամեկուսացմամբ զբաղվող Greentec ընկերությունը, երկու բնակելի տուն, որոնց սեփականատերերը ներկայացրել են գրավոր համաձայնություն՝ հասարակական շինության կառուցման վերաբերյալ: Հարևանությամբ գտնվող հողերի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի:

Տարածքը ունի թեք ռելիեֆ, անբարեկարգ է, առկա է բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն: Տարածքում բնության հատուկ պահպանվող կամ պատմամշակութային հուշարձաններ չկան:

Ֆիզիկաաշխարհագրական պայմանները.

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Ռելիեֆի բացարձակ նիշերը տեղամասում տատանվում են 1314-1324 մետրերի սահմաններում:

- Տեղամասի երկրաբանական կտրվածքը հետազոտված խորությունների սահմաններում ներկայացված է գրունտների 5 տարբեր շերտերով:
- Ուսումնասիրվող տեղամասում նախագծվող հասարակական շինության համար որպես հիմնատակ առաջարկվում է շերտ 3-ի (խճաբեկորային գրունտ) և շերտ 4-ի (բազալտներ) գրունտները:
- Փորված հորատանցքերով գրունտային ջրեր չեն բացահայտվել: Ըստ արխիվային նյութերի գրունտային ջրերը տեղակայված են 70 մետրից ավել խորություններում:

- Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Մեյամակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի Երևան քաղաքը գտնվում է 3-րդ սեյսմիկ գոտում, գետնի սպասվող առավելագույն սեյսմիկ արագացումները կազմում են 0,4g և ունի 9 և բարձր բալականություն:
- Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Մեյամակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի, 5.3.2 կետի, աղյուսակ 2-ի և ըստ ինժեներաերկրաբանական հետազոտությունների՝ նախագծվող բնակելի շենքերի համար որպես հիմնատակի գրունտներ բազալտները ընտրելու դեպքում ուսումնասիրվող տարածքի գրունտներն ըստ սեյսմիկ հատկության 1-ին կարգ են: Գրունտների ըստ սեյսմիկ հատկության կարգի ճշգրտման համար՝ համաձայն նորմատիվի 5.3.1 կետի, առաջարկվում է նաև հետազոտվող տարածքում իրականացնել երկրաֆիզիկական-սեյսմոլոգիական հետազոտություններ:
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,7 մետր:
- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցների վրա՝ բացակայում են:
- Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Կլիման.

Երևանի կլիման ընդհանուր առմամբ արտահայտված ցամաքային բնույթ է կրում. շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան -21°C , բացարձակ մաքսիմումը հասնում է $+41^{\circ}\text{C}$: Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 1-ում «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ II-7.01-2011 տվյալների համաձայն:

Աղյուսակ 1. Օդի միջին ջերմաստիճանը, $^{\circ}\text{C}$

| Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների | | | | | | | | | | | | Միջին տարեկան |
|---------------------------------|------|-----|------|------|------|------|------|------|------|-----|-----|---------------|
| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | |
| -2.9 | -0.8 | 5.1 | 11.8 | 16.3 | 20.8 | 24.5 | 24.2 | 19.9 | 13.1 | 6.4 | 0.1 | 12.0 |

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Երևան «Էրեբունի» մետեոկայանի տվյալների բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Օդի հարաբերական խոնավությունը, %

| Միջինը ըստ ամիսների | | | | | | | | | | | | Միջին տարեկան |
|---------------------|----|-----|----|----|----|-----|------|----|----|----|-----|---------------|
| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | |
| 77 | 73 | 61 | 57 | 59 | 53 | 49 | 50 | 51 | 60 | 70 | 76 | 61 |

Չյան ծածկույթի առավելագույն տասնորյակային բարձրությունը կազմում է 50 սմ, Չյան ծածկույթով օրերի միջին քանակը կազմում է 53: Չյան մեջ ջրի առավելագույն քանակը՝ 152 մմ: Հաստատուն ծածկույթը գոյանում է ոչ ամեն տարի:

Աղյուսակ 3. Տեղումների բնութագիրը.

| Տեղումների քանակը, միջին, մմ Մաքսիմալ օրական | | | | | | | | | | | | Տարեկան |
|---|----|-----|----|----|----|-----|------|----|----|----|-----|---------|
| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | |
| 28 | 31 | 38 | 48 | 55 | 29 | 16 | 8 | 11 | 31 | 30 | 28 | 353 |
| 22 | 28 | 26 | 34 | 47 | 47 | 34 | 22 | 47 | 34 | 30 | 26 | 47 |

Քամու նվազագույն միջին արագությունը հուլիս ամսին, որի կրկնվողությունը հասնում է 16 տոկոս, կազմում է 7.2 մ/վրկ: Քամու բացարձակ առավելագույն արագությունը 20 տարի մեկ անգամ հասնում է 24 մ/վրկ: Նորմատիվ հողմաբեռնվածքը կազմում է 45 կգ/մ2:

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Երևան-՝Արաբկիր՝ մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Քամու բնութագիրը

| Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա) | Ամիսներ | Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ | | | | | | | |
|--|-----------|--|-------|-----|-------|-----|-------|-----|-------|
| | | ըստ ուղղությունների | | | | | | | |
| | | Հս | ՀսԱրլ | Արլ | ՀվԱրլ | Հվ | ՀվԱրմ | Արմ | ՀսԱրմ |
| 889,7 | Հունվար | 13 | 29 | 8 | 7 | 14 | 20 | 6 | 3 |
| | | 1,9 | 1,9 | 1,6 | 1,7 | 1,8 | 1,5 | 1,8 | 1,9 |
| | Ապրիլ | 15 | 29 | 6 | 8 | 12 | 17 | 9 | 4 |
| | | 3,1 | 2,6 | 2,3 | 2,2 | 2,5 | 2,4 | 2,5 | 2,5 |
| | Հուլիս | 28 | 32 | 3 | 3 | 8 | 16 | 7 | 3 |
| | | 6,0 | 4,8 | 1,7 | 1,7 | 1,7 | 1,7 | 2,0 | 2,6 |
| | Հոկտեմբեր | 17 | 37 | 6 | 5 | 10 | 16 | 6 | 3 |
| | | 2,9 | 2,5 | 2,0 | 1,9 | 1,7 | 1,9 | 1,9 | 2,0 |

Արեգակնային փայլի տևողության, ճառագայթման ուժգնության բնութագիրը և ամպամած օրերի քանակը բերված են 5 – 7 աղյուսակներում

Աղյուսակ 5. Արեգակնային ճառագայթում (Երևան)

| Միջինը ըստ ամիսների Գումարային ճառագայթում (ուղիղ + ցրված), որը մուտք է գործում հորիզոնական մակերևույթ անամպ երկինքի դեպքում, ՄՋ/մ2 | | | | | | | | | | | | Միջին տարեկան |
|---|-----|-----|-----|------|------|------|------|-----|-----|-----|-----|---------------|
| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | |
| 264 | 423 | 586 | 804 | 1043 | 1182 | 1068 | 1047 | 842 | 620 | 339 | 214 | 700 |

Աղյուսակ 6. Արեգակնային փայլի տևողությունը (Երևան “Ագրո”)

| Տևողությունը ըստ ամիսների, ժամ | | | | | | | | | | | | Տարեկան |
|--------------------------------|-----|-----|-----|-----|-----|-----|------|-----|-----|-----|-----|---------|
| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | |
| 89 | 118 | 169 | 212 | 283 | 334 | 359 | 1047 | 352 | 300 | 246 | 90 | 2696 |

Աղյուսակ 7. Ամպամած օրերի քանակը (Երևան “Ագրո”)

| Ըստ ամիսների, օր | | | | | | | | | | | | Տարեկան |
|------------------|----|-----|----|-----|-----|-----|------|-----|---|----|-----|---------|
| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | |
| 10 | 6 | 4 | 2 | 0,2 | 0,1 | 0 | 0,1 | 0,3 | 1 | 4 | 11 | 39 |

Օդային ավազան

Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 3 դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

2019 թվականին Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները, սակայն տարվա ընթացքում և քաղաքի տարբեր հատվածներում դիտվել են գերազանցումներ: Իրականացված դիտարկումների 24%-ում դիտվել են փոշու, 15%-ում՝ ծծմբի երկօքսիդի, 3%-ում՝ ազոտի երկօքսիդի, 0.1%-ում՝ գետնամերձ օզոնի համապատասխան ՍԹԿ-ներից գերազանցումներ, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման աղբյուրներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը: 2019 թվականինի տվյալների համաձայն քաղաքում անշարժ աղբյուրներից արտանետված վնասակար նյութերում գերակշռում են ածխաջրածինները, ածխածնի մոնօքսիդը, փոշին, ծծմբի երկօքսիդը և ազոտի օքսիդները:

Աղյուսակ 8. Ակտիվ նմուշառման եղանակով դիտարկումների արդյունքները Երևանում.

| Որոշվող նյութերը (դիտակայանների քանակ) | Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի համար) | ՍԹԿ-ից գերազանցումների քանակ | | Միջին տարեկան կոնցենտրացիա (մգ/մ ³) | ՍԹԿ Միջին օրական (մգ/մ ³) |
|--|---|------------------------------|--------|---|---------------------------------------|
| | | >1 ՍԹԿ | >5 ՍԹԿ | | |
| Ծծմբի երկօքսիդ (7) | 0.067 (դիտ. N18) | 18 | - | 0,020 | 0,05 |
| Ազոտի երկօքսիդ (7) | 0.088 (դիտ. N18) | 175 | - | 0,018 | 0,04 |
| Փոշի (7) | 2.387 (դիտ. N18) | 694 | 34 | 0,126 | 0,15 |
| Գետնամերձ օզոն | 0.257 (դիտ. N19) | 53 | 1 | 0,010 | 0,03 |

Ջրային ռեսուրսներ

Երևանի կենտրոնով հոսում է Հրազդան գետը՝ իր սելավաբեր և տարանցիկ Գետառ, Ջրվեժ, Ողջաբերդ, Մուշաղբյուր վտակներով: Ներկայումս դրանք ներառվել են արհեստական հունների մեջ և սելավներից ու հեղեղումներից վնասագերծվել: Կառուցվել են Երևանյան լճի, «Հաղթանակ» զբոսայգու և այլ ջրամբարներ: Երևանում կան նաև այլ արհեստական կամ բնական լճակներ, որոնց մի մասը սնվում է ստորգետնյա արտեզյան ջրերից: Հայաստանի հանրապետության տարածքում ջրային ռեսուրսների աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ջրի աղտոտման աղբյուր են հանդիսանում՝ կենցաղային և արդյունաբերական հոսքաջրերը, ձնհալիբն անձրևների ժամանակ հողահանդակներից տեղափոխված պեստիցիդները և այլն: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն՝ ՀՀ կառավարության 2011թ. հոկտեմբերի 27-ի N75-Ն որոշման: Գառնու և Ապարանի բարձունքներից խողովակներով Երևան հասնող ջուրը օգտագործվում է ոռոգման, ինչպես նաև՝ քաղաքի շատրվանների, արհեստական լճակների համար: Երևանի ներկայիս 33 ջրավազաններից առավել կարևոր նշանակություն ունի Երևանյան լիճը, որը շահագործման է հանձնվել 1967 թվականին: Ավելի քան 40 տարվա ընթացքում լիճը հիմնովին չի մաքրվել (ներկայումս քաղաքապետարանի կողմից սկսվել են մաքրման աշխատանքները): Գետերով այնտեղ է լցվում հսկայական քանակությամբ կենցաղային և շինարարական աղբ, բերվածքների և թափոնների կուտակման հետևանքով ջրամբարի օգտագործման ծավալը գրեթե կիսով չափ նվազել է: 2022 թվականի 4-րդ եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է հանրապետության 46 գետերում և Սևանա լճի 63 դիտակետում: Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի տեղեկագրի՝ 2022թ. 4-րդ եռամսյակում գետերում կատարված դիտարկումների արդյունքների՝ Հրազդան գետի ջրի որակը Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը հոկտեմբեր ամսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս):

Հողերի նկարագիրը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած,
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային,
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Հողային ռեսուրսներ

Հասարակական նշանակության շինության կառուցումը ենթադրում է նաև հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 2.600 խմ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 2.600 խմ ծավալով հողային զանգվածը, որի մի մասը՝ 1.150 խմ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք: Մնացած հանույթը օգտագործվելու է տարածքի հարթեցման նպատակով և ավելցուկ չի առաջանալու:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

| | |
|----------------------------|--|
| Անանուն սյունաձև բազալտներ | բաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում, Սբ. Սարգիս եկեղեցու մոտ |
| Անանուն սյունաձև բազալտներ | բաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում մանկական ե/գ տանող թունելի արմ ճակատամուտքի մոտ |

Արաբկիր վարչական շրջանի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկ

| ՎԱՅՐ | ՀԱՍՑԵ | ՀԱՎԵՆՅԱԼ ՆՇՈՒՄՆԵՐ |
|--|---------------------------------|---|
| Ամրոց Ձորաբերդ | Քեռու փող. Հրազդանի | Ամրոց Ձորաբերդ Քեռու փող. Հրազդանի ձախափնյա հրվանդանի վրա, Մաթեմատիկական մեթենաների ինստիտուտից ամ |
| Քարայր-կացարան «Նոր Արաբկիր-1», («Ձորաբերդ-1») | | Ձորաբերդի տակ, Հրազդանի կիրճի վերին մասում |
| Ինստիտուտի համակառույց. Ա. Մնջոյանի անվան Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը | Ազատության պող. | 26 ճարտ.՝ Է. Տիգրանյան |
| Հուշարձան Արմենակ Մնջոյանի | | բանդ.՝ Ս. Մանասյան, Հ. Մուրադյան, ինստիտուտի բակում |
| Խճանկարներ «Ներփակ կորեր». «Երկրաչափական տարածություն» | Հ. Հակոբյան փող. 3 | Նկ՝ Օ. Մինասյան, Երևանի Մաթեմատիկական մեթենաների գիտահետազոտական ինստիտուտի հաշվողական կենտրոնի դահլիճում |
| Կամուրջ Հրազդան (Հրազդանի մեծ կամուրջ), (Կիւյան կամուրջ) | Կիւյան և Լենինգրադյան փող. միջև | ճարտ.՝ Գ. Աղաբաբյան, կոնստ՝ Ա. Հովնանյան, Վ. Փինաջյան, Ս. Դուրգարյան, Ն. Սլավինսկի, Երևանի |

| | | |
|--|------------------------------------|---|
| | | կենտրոնն ու իս շրջանները միացնում է Աջափնյակին և Աշտարակի մայրուղուն |
| Հիդրոէլեկտրակայանի շենք. Քանաքեռի Հ. Տեր-Աստվածատրյանի անվան Հէկ-ը | Հրազդանի ձախ ափին, Քանաքեռի ձորում | ճարտ.՝ Մ. Գրիգորյան |
| Հուշարձան Հովսեփ Տեր-Աստվածատրյանի | | հիդրոէլեկտրակայանի տարածքում |
| Հուշահամալիր «Նոր Արաբկիր» («Վերածնունդ») | Արաբկիր զբոսայգի | ճարտ.՝ Գ. Ղամբարյան |
| Հուշաղբյուր Նոր Արաբկիրի 50-ամյակին | Կոմիտասի պողոտա 19 | ճարտ.՝ Սպարտակ Կևոնցյան, Նկ՝ Վ. Օհանյան |
| Հուշարձան Ղազարոս Աղայանի | Հ. Հակոբյան փող. Նրբ 3 | թիվ 130 համանուն դպրոցի առջև, քանդ.՝ Ն. Նիկողոսյան, ճարտ.՝ Ջ. Թորոսյան |
| Հուշարձան Հոկտեմբերյան հեղափոխության 50- ամյակին | Ազատության պող. | պողոտայի սկզբնամասում, ճարտ.՝ Ս. Գուրզադյան, Ջ. Թորոսյան |
| Հուշարձան «Մուսակիբեռնետիկա» | Հ. Հակոբյան փող. 3 | Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի տարածքում, քանդ.՝ Ե. Քոչար |
| Հուշարձան Ալեքսանդր Շիրվանզադեի | Վաղարշյան փող. 24/17 | թիվ 21 համանուն դպրոցի առջև, քանդ.՝ Ա. Հարությունյան, ճարտ.՝ Ֆ. Դարբինյան |
| Հուշարձան Ռուբեն Սևակի | Բաբայան փող. 40 | թիվ 151 համանուն դպրոցի բակում, քանդ.՝ Լ. Թոքմաջյան |
| Հուշարձան «Վահագն Վիշապաբաղ» | Վաղարշյան փող. 12 | ճարտ.՝ Ա. Աղայան, Գ. Գրիգորյան, քանդ.՝ Վ. Հարությունյան |
| Հուշարձան Բաֆֆու | Կոմիտասի պող. 37 | թիվ 36 համանուն դպրոցի առջև |
| Հուշարձան Լևոն Օրբելու | Օրբելի եղբայրների փող. 22 | համանուն ֆիզիոլոգիայի ինստիտուտի շենքի առջև, քանդ.՝ Գաբրիել Եփրոյան |
| Մշակույթի տուն «Կանազ» | Ազատության պող. 19 | ճարտ.՝ Ս. Մանուկյան, Վ. Տոնիկյան |
| Ջրանցք՝ Դալմայի | Հրազդանի աջ ափին | վրկո՝ 1815 թ., Հուսեփն Ալի խանի կողմից Կիլյան կամրջից իս, անցնում է Նաև Աջափնյակ վարչական շրջանի տարածքով |
| Փողոցի կառուցապատում. Կիլյան փողոցը | Կիլյան փող. | ճարտ.՝ Գ. Թամանյան, Ֆ. Դարբինյան, Ֆ. Մանե, Բ. |

| | | Սարգսյան |
|--|---|---------------------------------|
| Քարայր կացարանների համալիր Քանաքեռի | Հրազդանի կիրճի ձախ ափին, Քանաքեռ ՅԷԿ մոտ | |
| Քարայր-կացարան «Արաբկիր-11», («Նոր Արաբկիր-2») | Հրազդանի ձախափնյա զառիթափին, Դավիթաշենի կամրջի մոտ | |
| Քարայր-կացարան «Քանաքեռ-4», («Նոր Արաբկիր-3») | Հրազդանի ձախափնյա զառիթափին, Քանաքեռի այլումիևի գործարանի մոտ | Նախորդ քարայր-կացարանից 2 կմ հս |
| Քարայր-կացարան «Քանաքեռ-5» | Հրազդանի ձախ ափին | ՀԷԿ-ից 400 մ հս |
| Քարայր-կացարան «Քանաքեռ-7» | Հրազդանի աջ ափին | հրվանդանի լանջին |
| Քարայր-կացարան «Քանաքեռ-8» | Հրազդանի աջ ափին | ՀԷԿ-ից 50 մ հս |
| Քարայր-մատուռ «Քանաքեռ-2» | Հրազդանի ձախ ափին | ՀԷԿ-ից 40 մ հս |

2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից աշխատանքները կդադարեցվեն և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:

Կենսաբազմազանություն

Քուսական աշխարհ: Նախատեսվող գործունեության տարածքը բուսաաշխարհագրական տեսակետից պատկանում է Երեւանի ֆլորիստիկ շրջանին, որին սովորաբար յուրահատուկ են կիսաանապատային և անապատային բուսածածկույթը, տարածքի հարեւանությամբ հանդիպող սակավ բուսատեսակները հիմնականում քսերոֆիտներ (չորասերներ) են: Ընդհանուր առմամբ, Երեւանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, քսերոֆիտ, օշինդրային կիսաանապատների բուսածածկ ոչ բնակելի, ոչ արտադրական, բնական բուսածածկով տարածքներում կարող է աչքի ընկնել տեսակային հարուստ բազմազանությամբ: Որպես կանոն, այս տեսակները տարածված են ոչ աղակալված, մակերեսային քարքարոտ գորշ հողերի վրա և ներկայացված են օշինդրաէֆեմերային-կիսաանապատային և հալոֆիլանապատային տիպերով: Օշինդրային կիսաանապատների հիմնական բաղադրիչը օշինդր բուրավետն է (*Artemisia fragrans*), որը մինչև 50 սմ բարձրության, փայտացած առանցքով կիսաթփիկ է: Այն զարնանը և ամռանը պահպանում է իր մոխրագույն տեսքը, աշնանը ծածկվում է մանր դեղին ծաղիկներով: Գարնանը այդ թփերի միջ և ընկած տարածությունը զբաղեցնում են էֆեմերները՝ *Ceratocephalus falcatus*, *Ziziphora tenuiflora*, *Ziziphora persica*, *Alyssium desertorium*, *Poa bulbosa*, *Bromus tectorum*, *Lepidium vesicarium* տեսակներով: Հունիսի կեսերին, տեղումների քանակին նվազեցման և օդի ջերմաստիճանի բարձրացման հետ այս տեսակները չորանում են: Սակայն աշնանը տեղումների ավելացման հետ մեկտեղ

օշինդրային անապատները վերակենդանանում են, ծաղկում են՝ օշինդրը (*Artemisia*), *Kochia prostrata*, *Noaea mucronata* եւ այլ բուսատեսակներ: Ուշ աշնանը եւ ձմռանը հողը ծածկվում է աճող էֆմերների կանաչ գորգով: Երեւանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից են՝ *Salsola soda* L.- Օշան սողակիր, *Salsola aucheri* (Moq.) Bunge ex Iljin-Օշան Օշեի, *Salsola tomentosa* (Moq.) Spach-Օշան թաղիքային, *Astragalus montisaquilis* Grossh.- Գազ արծվասարային, *Astragalus massalskyi* Grossh.-Գազ Մասսալսկու, *Astragalus karjaginii* Boriss. -Գազ կարյազինի, *Astragalus karakuschensis* Gontsch. - Գազ կարակուշի, *Astragalus holophyllus* Boriss.- Գազ ամբողջատերև, *Astragalus guttatus* Banks et Sol. -Գազ բծավոր, *Astragalus eriopodus* Boiss. - Գազ թավոտ, *Astragalus corrugatus* Bertol – Գազ կնճռոտ, *Astragalus commixtus* Bunge - Գազ խառն, *Astragalus camptoceras* Bunge – Գազ կորատեղջուրավոր, *Astragalus paradoxus* Bunge - Գազ տարօրինակ, *Astragalus schelkovnikovii* Grossh. - Գազ Շելկովնիկովի, *Astragalus sukaczevi* Derv. et Jelenevsky - Գազ Սուկաչովի, *Astragalus vedicus* Takht. - Գազ վեդու տեսակները, *Acorus calamus* L. (Խնկեղեգճահճային), *Lepidium lyratum* L. (Նվարդակքնարաձեւ), *Salsola tamamschjanae* Iljin (Օշան Թամամշյանի), *Astragalus paradoxus* Bunge (Գազտար օրինակ), *Glycyrrhiza echinata* L. (Մատուտակ խոզանավոր), *Rhizocephalus orientalis* Boiss. (Արմատագլխիկ արեւելյան): Նշված բուսատեսակները հանդիպում են Երեւանի ֆլորիստիկ շրջանում, սակայն ծրագրի համար նախատեսված տարածքներում տարածման արեւալներ չունեն: Նախնական ուսումնասիրությունների եւ գրականական տվյալների նույնականացման արդյունքում բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր չեն հայտնաբերվել:

Կենդանական աշխարհ: Կենդանական աշխարհ: Նախատեսվող գործունեության հարակից տարածքներին եւ ընդհանուր լանդշաֆտային գոտուն բնորոշ կաթնասունների տեսակային կազմից ամենուրեք հանդիպում են՝ Եվրոպական ճնճղաճուռակ - *Accipiter brevipes*, Օձակեր արծիվ – *Circaetus gallicus*, Կանաչ մեղվակեր *Merops persicus*, Երկարատ սցինկ- *Eumeces schneide*, Առաջավորասիական մաբույա *Trachylepis septemtaeniata*, Անդրկովկասյան սահնօձ - *Zamenis hohenacker*, *Mucrotus arvalis* Pall. (դաշտամուկ), մի քանի տեսակ չղջիկներ՝ *Nyctalus noctula* (շեկիրիկնաչղջիկը), *Vespertilio ognevi* (Օգնեւիմաշկեղը), միջատակերներ (*Hemiechinus auritus*, *Mustela nivalis*): Անողնաշար կենդանատեսակներից տարածաշրջանում հանդիպում են՝ *Phytodryadusa armeniaca* (ծղրիդներ), *Nocarodes armenus* (մորեխներ), *Amphicoma eichleri*, *Cantharis araxicola* (բզեզներ), *Zodarion petrobium* (սարդեր): Կարիճներից հանդիպում է միայն *Buttus caucasicus*-ը: Նախատեսվող գործունեության իրականացման տարածից դուրս բնական, տնտեսական գործունեության մեջին ինտենսիվ ներգրավվածություն չունեցող տարածքներում Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներից կաթնասուններից կարող են հանդիպել *Rhinolophus Mehelyi* (Մեհելիի պայտաքիթ), (*Barbastella leucomelas*.) Ասիական լայնականջ չղջիկ, (*Miniopterus schreibersi*) Սովորական երկարաթև չղջիկ: Նախնական ուսումնասիրությունների եւ գրականական տվյալների նույնականացման արդյունքում բուն նախատեսվող գործունեության

իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիներ չեն հայտնաբերվել (ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշման):

Թափոնների կառավարում

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Սակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում շինարարական աղբն է 35 խմ ծավալով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը և՛ շինարարության փուլում և՛ շահագործման փուլում կտեղափոխվի մոտակա աղբավայր Երևան քաղաքը սպասարկող օպերատորի կողմից:

Շահագործման փուլում կենցաղային աղբի հավաքման և տարածքից հեռացման համար շենքերի նկուղային հարկերում նախատեսվում է տարածք, որի վերջնական տեղը կհստակեցվի օպերատորի հետ աղբահան մեքենաների տեսակը ճշտելուց հետո:

Արտանետումների աղբյուրներ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ գոյություն ունեցող շինությունների հիմքերի քանդման ընթացքում,
- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx):

Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

Նախագծի համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 08122021-01-0367 վկայականը /գաղտնաբառ՝ TB92BKDIQN2F/, Երևան քաղաքի քաղաքապետի կողմից 03.08.2022թ-ին տրված N 01/18-07/1-27494-686 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Հասարակական նշանակության շինության նախագիծը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջան, Թբիլիսյան խճուղի 21/5 հասցեում:

Նախատեսված է 2660.46 քմ հողամասի վրա կառուցել 1 ստորգետնյա և 3 վերգետնյա հարկերով գրասենյակային և պահեստային տարածքներ: Տանիքը նախատեսվում է հարթ՝ կազմակերպված ջրահեռացմամբ: Ավտոկայանատեղիի մուտքը նախատեսված է շինության ձախ հատվածից, իսկ աջ հատվածից նախատեսված է պահեստին մոտեցող ավտոմեքենաների ուղղին:

Տարածքի մնացած հատվածները ամբողջությամբ կանաչապատվելու և բարելավվելու են:

Տեխնիկական տվյալներ`

- ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍ - 2660.46 մ²
- ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ -2.85 ՆԻՇՈՒՄ – 1553.5 մ²
- ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ +0.90 ՆԻՇՈՒՄ – 1601.0 մ² / 60.17 %
- ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ +5.70 ՆԻՇՈՒՄ – 744.7 մ²
- ԵՐՐՈՐԴ ՀԱՐԿԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ +9.30 ՆԻՇՈՒՄ – 740.3 մ²
- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ – 4639.5 մ²
- ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ – 534.7 մ² / 20.1 %
- ԱՍՖԱԼՏԱՊԱՏ ՏԱՐԱԾՔՆԵՐ ԵՎ ՃԵՄՈՒՂԻ – 524.76մ² / 19.73 %
- ԿԱՌՈՒՅՑԻ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԸ + 14.1 մ
- Հողամասի նպատակային նշանակությունը` բնակավայրերի,
- Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը` խառը կառուցապատման,
- Գրանցված իրավունքի տեսակը` սեփականություն:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

Շերտ-1 Բուսահող բաց շագանակագույն, խճի ու խճավազի մինչև 10-15% պարունակությամբ, կավավազային կազմի: Գրունտը սակավ խոնավ է: Շերտի հորատված հզորությունը 0,2-ից-0,4 մետր է: Ունի լայն տարածում:

Գրունտն ըստ շահագործման դժվարության` համաձայն ՇՆևԿ IV-5-82-ի II կարգ է:

Շերտ-2 Սպիտակահողեր (կարբոնատային շերտ) դեղնասպիտակագույն, սակավ խոնավ, փխրուն և ցեմենտացած, խճաքարի և ավազների տեսքով: Ունի լայն տարածում: Շերտի հորատված հզորությունը 0,5-2,3 մետր է: Ժամանակակից էյուվիալ առաջացումներ են:

Գրունտն ըստ շահագործման դժվարության` համաձայն ՇՆևԿ IV-5-82-ի III կարգ է (պայմանական):

Շերտ-3 Խճաբեկորային գրունտ կավավազային լցոնի 10-20% պարունակությամբ: Գրունտը սակավ խոնավ է: Բեկորները բազալտային կազմի են, իսկ լցոնը` շագանակագույն, պինդ թանձրության և խիտ: Շերտն ունի լայն տարածում: Հորատված հզորությունը 3,5-8,7 մետր է: Չորրորդական ժամանակաշրջանի էյուվիալ-դեյուվիալ առաջացումներ են:

Գրունտն ըստ շահագործման դժվարության` համաձայն ՇՆևԿ IV-5-82-ի V կարգ է:

Շերտ-4 Բազալտներ մոխրագույն և մասամբ վարդագույն, թույլ ծակոտկեն, հոծ, տեղ-տեղ ծակոտկեն ու խոռոչավոր, բեկորային անջատումներով, կարծր, որոշ մասերում ճաքճքված, ջարդրտված ու խճայնացված: Շերտում հնարավոր են խարամների ոչ մեծ հզորության ոսպնյակաձև, գնդաձև ներփակումներ և ենթաշերտեր: Շերտը համատարած է: Հորատված առավելագույն հզորությունը 32,0 մետր է: Նեոգենի ժամանակաշրջանի վերին պլիոցեն դարակարգի հրաբխային ապարներ են:

Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆևԿ IV-5-82-ի VII կարգ է:

Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II-ի՝ հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 2 տարի

Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1. Շին հրապարակում որտեղ տարվում են ապամոնտաժման և քանդման աշխատանքներ չի թույլատրվում կատարել այլ աշխատանքներ և կողմնակի մարդկանց ներկայությունը արգելվում է:
2. Չի թույլատրվում կատարել ապամոնտաժման աշխատանքներ, լիցենզիայի քանու 15 մ/վ արագության դեպքում, սառցակալած ժամանակ, մառախուղի ժամանակ:
3. Շենքի տարատեսակ կոնստրուկցիաների ապամոնտաժման աշխատանքները անհրաժեշտ է կատարել կառուցման աշխատանքներին հակառակ հերթականությամբ:
4. Չի թույլատրվում կոնստրուկցիաների վրայով մարդկանց տեղաշարժը ապամոնտաժման աշխատանքների ժամանակ:
5. Աշխատանքի ընդմիջման ժամանակ չի թույլատրվում ապամոնտաժվող կոնստրուկցիաները թողնել կռունկի ճոպաններից կախված:
6. Ապամոնտաժվող կոնստրուկցիաները տեղափոխելիս նախապես անհրաժեշտ է գնահատել տեղափոխվող էլեմենտի անխզելիությունը և տեղափոխման ճոպանների հուսալի միացումը:
7. Կռունկով ապամոնտաժվող էլեմենտները տեղափոխելիս անհրաժեշտ է դադարեցնել մարդկանց տեղաշարժը կռունկի աշխատանքային վտանգավոր տեղամասում:
8. Պատերը քանդելիս նախատեսել միջոցառումներ չամրացած պատերի փլուզման վտանգը կանխելու համար:

9. Պատերը և միջնորմները քնդելիս քարերը անհրաժեշտ է կուտակել համապատասխան տարայում և կռունկի միջոցով տեղափոխել թափոնների պահոց:

Կառավարման Որոշում՝ 15.01.2009թ. N144-Ն, ՇՀԻՍ III-4-80* Москва 2000г

Շինարարության ընթացքում բոլոր աշխատողները՝ բանվորները, շինարարության անվտանգությունն ապահովող պատասխանատու անձիք և, հատկապես շին մեխանիզմների հետ աշխատողները պետք է անթերի և մեծ պատասխանատվությամբ կատարեն անվտանգության բոլոր կանոնները :

Աշխույժը ամեն աշխատանքային օրն սկսելուց առաջ շինարարությունն իրականացնող բոլոր անձանց պետք է ծանոթացնի տվյալ օրվա աշխատանքային ծրագրին և նորից ու նորից հիշեցնի անվտանգության կանոնները և նրաց պարտականությունը այդ կանոններն անթերի կատարելու համար, որն ապահովում է յուրաքանչյուրի անվտանգությունը, ստուգի, որ բանվորները կրեն իրենց աշխատանքների բնույթին համապատասխան համազգեստ և անվտանգության պարագաներ՝ ռետինե ձեռնոցներ, ռետինե երկարաճիտ կոշիկներ, պաշտպանիչ գլխարկ, ակնոցներ և բարձրության վրա աշխատելու համար ամրագոտիներ: Մեխանիզմների հետ աշխատողները պետք է ստուգեն իրեց մեխանիզմների, սարքավորումների, ճուրհանների աշխատանքային վիճակը և թերության դեպքում այն պարտադիր նորոգեն, նոր միայն սկսեն աշխատանքը :

Քանի որ էքսկավատորներն աշխատելու են փոսորակում կատարելու են քանդման աշխատանքներ միևնույն ժամանակ, ուստի բացառապես արգելվում է կողմնակի մարդկանց այնտեղ գտնվելը, 12.0մ խորության փոսորակում (տեղանքի բարձր հատված), իսկ գրունտի քանդման թեքությունը փոսորակի մի հատվածում՝ համարյա ուղաձիգ է, ուստի բանվորներին ու շին. հրապարուկում գտնվող անձանց խստիվ արգելվում է մոտիկ գտնվել փոսորակի քանդված մասերին կամ կանգնել դրանց վերևի մասերում՝ փլզումներից գերծ մնալու համար:

Մոնտաժային աշխատանքները ճիշտ և անվտանգ իրականացնելու համար փոսորակի ուղղաձիգ քանդված ամբողջ մակերեսով տեղադրվում է մետաղացանց վրանակտորով:

Փլզումներից գերծ մնալու համար, ըստ երկարության յուրաքանչյուր 10,0մ-ը մեկ, երբ գրունտը քանդվում է ամրացվում է պաշտպանիչ մետաղացանցը, որից հետո քանդվում է հաջորդ 10,0մ-ը, կատարվում նորից մետաղացանցով ամրացման աշխատանքներ:

2020Երբ մինչև համապատասխան բարձրության վրա կատարվում է արտաքին պատերի իրականացում, կատարվում է մեկուսացման աշխատանքներ, ամրանացանցը հանվում է և կատարվում ետլիցք: Ետլիցքը որոշ տեղերում կատարվում է ձեռքով :

Էքսկավատորների և բուլդոզերի աշխատանքները դադարեցնելուց հետո (ընդմիջման ժամին կամ աշխատանքի վերջում) էքսկավատորի շերեփն ու բուլդոզերի թին անպայման պետք է ցած իջեցվի, կպած լինի գետնին և լինի դատարկ :

Աշտարակային կռունկների աշխատանքի ժամանակ, երբ սլաքներին ամրացվում է, բեռը գետնի վրա տվյալ մասում աշխատողները հեռանում են վտանգավոր գոտուց և վերադառնում

են նորից այդտեղ, երբ կռունկի սլաքը դատարկ սպասում է նորից բեռնավորման: Աշտարակային կռունկների աշխատանքից հետո, կամ ընդմիջման ժամանակ սլաքներից կախված բեռ չպետք է լինի: Մեխանիզմների շարժիչներն անջատվում է միայն դատարկ սլաքի դեպքում:

Աշտարակային կռունկների սլաքները սահմանված աշխատանքային սահմանագիծը չպետք է անցնեն:

Աշտարակային կռունկը բեռը վերցնելիս՝ բեռնավորված սլաքի ճոպանը բեռով հանդերձ համարյա մոտեցնում է կռունկի կմախքին, սլաքը տեղափոխվում է համապատասխան պահանջված աշխատատեղը, որից հետո ճոպանով բեռը տեղափոխվում է սլաքի համապատասխան ծայրը: Սա արվում է, որպեսզի ուրիշի տարածքի վրայով անցնելիս սլաքից կախված բեռը այդ տարածքի վրա չհայտնվի: Սա անհրաժեշտ անվտանգության պայման է:

Շինմոնտաժային աշխատանքների ժամանակ չի կարելի գտնվել այն մասում, ուր կռունկի սլաքը բարձրացրած բեռով շարժվում է, դա խստիվ արգելվում է ըստ անվտանգության կանոնների, որը պետք է անվերապահորեն կատարել: Խստիվ արգելվում է աշխատանքների դադարի ժամանակ կռունկից կախված բեռների առկայությունը: Բեռը ոչ մի դեպքում չի կարելի վերնում կռունկից կախված թողնել և անջատել մեխանիզմը: Բեռի անկման վտանգավոր սահմանագիծը նշհարվում է փոքրիկ դրոշակներով կամ արգելասահմանի վտանգավոր գոտիներում տեղադրվում են ցուցատախտակներ համապատասխան գրություններով:

Բոլոր արտաքին ցանցերի աշխատանքները կատարելիս մինչև հողի ետլիցքը համապատասխան մարմինների ներկայությունը պարտադիր է: Կազմվում է համապատասխան ակտ աշխատանքի որակի և ապահով շահագործման վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության մարմնի կողմից տրված հրահանգով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը ազտոտումից, թունավոր արտաթորումներից:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ՔԱՐԵ ՊԱՏԵՐԻ ԵՎ ՇԻՆՎԱԾՔՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1. Շինարարության ընթացքում շինմոնտաժային աշխատանքները կատարելիս նախապես անհրաժեշտ են ապամոնտաժված կոնստրուկցիաների շենքին առնչվող հանգույցները ենթարկել համապատասխան մշակման նոր մոնտաժային և կառուցման աշխատանքների կատարման համար:

2. Շինարարության կատարման ժամանակ անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության միջոցառումներ.

- Աշխատատեղերի տեղադրությունը ըստ լուսավորության 1.3 մետր և ավելի տարբերությունների դեպքում,
- Բարձր տեղադրված կոնստրուկցիաների, նյութերի, գործիքների անկումից,
- Մեքենաների շարժական մասերի և նրանցով տեղաշարժվող կոնստրուկցիաների և նյութերի անկումից,
- Շենքի և շինության չամրացված կոնստրուկցիաների փլուզումից,
- Մեքենաների մասերի անկումից,
- Աշխատանքի ժամանակ վնասակար նյութերով աշխատելիս անվտանգության ապահովման համար,
- Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նյութերի և կոնստրուկցիաների աշխատատեղերում ճիշտ դասավորությունը,
- Աշխատանքների կատարման հերթականությունը հաշվի առնելով կոնստրուկցիաների կայուն տեղադրման համար,
- Կոնստրուկցիաների և ծինվածքների տեղադրման ժամանակ ապահովել միջոցառումներ աշխատողների ցած չնկնելու և նրանց կողմից իրերի ընկնելու վտանգի դեմ համապատասխան համապատասխան պաշտպանիչ միջոցառումներ իրականացնելու,
- Ճշգրտել կռունկի մակնիշը, նրա տեղադրման վայրը և նրա աշխատանքային վտանգավոր գոտին նշահարել դրոշակներով ցուցանակներով և այլ միջոցներով,
- Ապահովել աշխատատեղերի անվտանգությունը Բարձրության վրա:
- Ճշտել տեղադրվող կոնստրուկցիաների հաջորդականությունը,
- Մոնտաժման ընթացքում ապահովել կոնստրուկցիաների և շինվածքների կայունությունը,
- Քարի շարը վերին հարկում պետք է կատարվի միջհարկային կրող կոնստրուկցիաների ծածկի աստիճանավանդակների և հարթակների տեղադրումից և պատրաստումից հետո:

Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Շինարարական անվտանգության պահանջները և տվյալ կառուցվածքի տեխնոլոգիական առանձնահատկությունները հաշվի առնելով կառուցման աշխատանքները նախատեսվում է կատարել երկու փուլով:

- Առաջին փուլում, կատարվում է գոյություն ունեցող քանդման ենթակա շինությունների կոնստրուկցիաների և հիմքերի ամբողջական ապամոնտաժման աշխատանքները, որի ավարտից հետո անհրաժեշտության դեպքում ամրացվում են կից շինությունների հիմքերը,

- երկրորդ փուլում, կատարվում են շինության կառուցման աշխատանքները:

Շինարարական հրապարակը, ներառյալ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն, կազմակերպվելու է բացառապես համալիրի վարչական տարածքի սահմաններում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

Բրիգադների քանակական և մասնագիտական- որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրած ծավալների, աշխատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

Տարածքում ժամանակավորապես տեղայակվելու են հետևյալ շինությունները և պարագաները՝ աշխատանքների կազմակերպման և կենցաղային կարիքների բավարարման նպատակով.

Գրասենյակ – 1 հատ

Հանդերձարան – 2 հատ

Նյութերի պահեստ – 12,9 քմ

ԲԻՈ զուգարան – 2 հատ

Աղբի տարաներ – 1 հատ

Լուսարձակներ – 3 հատ

Հակահրդեհային վահանակ – 2 հատ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (ցանկապատում, լուսավորում, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափեխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան:

Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Աշխատանքների կատարման համար ներկայացվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները՝

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 3 մարդ
- Արհեստագործներ և մանվորներ - 14 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ - 5 մարդ

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

Հողային աշխատանքների կատարման համար օգտագործվում են թրթուրավոր էքսկավատորներ:

1. Շինարարական աշխատանքների համար որպես տարբերակ ընտրված է «Галичанин КС-65713-1» ավտոկռունկը:

Աշխատանքների կատարման ընթացքում տվյալ տեխնիկան ապահովվելու և տեխնիկոտնտեսական նկատառումներից ելնելով հնարավոր է օգտագործել նրանցից մեկը կամ կառուցմանը զուգահեռ փոխարինել մեկը մյուսով: Վերհանների օգտագործումը նորմայավորված չէ:

2. Ճոպանասարքերի ընտրությունը կատարվել է հաշվի առնելով տեղափոխվող մեքի ծավալը և ամրակցվող էլեմենտների քաշը:

3. Ճոպանակետերը պետք է ունենան արտադրող գործարանի դրոշմները կամ ամրակցված նշում հաշվառված համարով, բեռի կրողունակության նշումով և փորձարկման ամսաթվով:

4. Տարահանվող գրունտների զանգվածի պահոցատեղիները և թափոնների պահոցները կազմակերպել համաձայն շինարարական կապալառու կազմակերպության կողմից մշակվող շինարարական արտադրանքի կազմակերպման նախագծի:

| Հ/Հ | Անվանումը | Մակնիշը | Չափմ. միավոր | Քանակ |
|-----|---|--------------|-----------------|-------|
| 1. | Ավտովերամբարձ կրունկ | KC-65713-1 | հատ | 1 |
| 2. | Բեռնատար ավտոբեռոնախառնիչ /ըստ պահանջի/ | СБ-69Б | հատ | 1 |
| 3. | Բեռնատար ինքնաթափ | MA3 5550 | հատ | 3 |
| 4. | Շարժական կոմպրեսոր | ЗИФ - 55 В | հատ | 1 |
| 5. | Էլ.եռակցման սարք | СТН 500 | հատ | 1 |
| 6. | Բուրդեր | | հատ | 1 |
| 7. | Էքսկոլատոր | Hyundai 170W | հատ | 1 |
| 8. | Ձեռքի էլեկտրական գործիքներ | | հատ | |
| 9. | Ձեռքի մեխանիկական գործիքներ | | հատ | |
| 10. | Ատաղձագործական գործիքներ | | հատ | |
| 11. | Ներկարարական գործիքներ | | հատ | |

Ընդ որում շինարարության ընթացքում կօգտագործվի վերը նշված տեխնիկան և/կամ ավելի ժամանակակից համարժեք տեխնիկա՝ էկոլոգիական ավելի բարձր չափանիշներին համապատասխանող:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Նյութերի և բնատեսուրանների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնատեսուրաններից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար: Աշխատողների խմելու ջուրը գնվելու է և բերվելու է առանձին տարրաներով:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, շինարարական աղբն է 35 խ/մ ծավալով: /ծածակագիրը՝ 9120060101004/

Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/ կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

Հասարակական նշանակության շինության ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին, ջրամատակարարումը կիրականացվի Թբիլիսյան խճուղով անցնող D=600մմ ջրագծից, ջրահեռացումը՝ Թբիլիսյան խճուղով անցնող D=800մմ կոյուղատարով, հեղեղատարը՝ Թբիլիսյան խճուղով անցնող D=500մմ կոյուղագծով, որոնց համար լիցենզավորված կազմակերպության կողմից կազմվել է նախագիծ:

Հասարակական նշանակության շինության գազամատակարարումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ ցանցին, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Շինարարական աշխատանքների ընթացքում էլեկտրամատակարարումը՝ 900կՎա հզորությամբ և 0.4կՎ լարմամբ կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի: Ընկերությունը դիմել է Տեխնիկական պայման ստանալու նպատակով:

Շինարարության ընթացքում ջրամատակարարումը կիրականացվի ջրատար մեքենաներով մատակարարման միջոցով: Նույն տարբերակով շին հրապարակ բերված ջրից էլ օգտագործվելու է նաև ջրցան իրականացնելու համար:

Շահագործման ընթացքում ջերմամատակարարումը կիրականացվի լոկալ կաթսայատան միջոցով:

Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 19 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 730 օր

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 19 \times 0.025) \times 730 = 382 \text{ խմ/շին. ժամ.}:$$

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S₁ – ջրվող տարածքի մակերեսը, 4100 քմ,

K₁ – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 730

$$U_1 = 4100 \times 0.0015 \times 730 = 4490 \text{ խմ/շին. ժամ.}:$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 4880 խմ/շին. ժամ:

Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

փոշու արտանետումներ գոյություն ունեցող շինությունների հիմքերի քանդման ընթացքում, փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում, դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

Շինարարության ընթացքում շինարարական փոշուց պաշտպանելու համար շենքը պարտադիր կերպով ծածկվում է շինարարությանը համապատասխան բարձրությամբ 180 գրամ/քմ խտությամբ ծածկով:

Օդափոխություն

Գրասենյակային և պահեստային տարածքներում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկերի առաստաղների տակ: Օդափոխության համար օգտագործվել են "REMAK" ֆիրմայի համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել այլ համարժեք համակարգերով: Էներգիայի խնայողության համար օդափոխության համակարգերում օգտագործվել են ռեկուպերատորներ: Ներածումը և արտածումը կատարվում է կարգավորող ճաղավանդակների միջոցով: Գրասենյակային և պահեստային տարածքների բոլոր օդատարերը մեկուսացվում են ինքնակաշռող K-flex մեկուսիչով , իսկ ծխահեռացման օդատարերը՝ МВОР հրակայուն մեկուսիչով:

Ավտոհանգրվաններում նախագծված են մեխանիկական դրդմամբ արտաձման և ներաձման օդափոխության համակարգեր: Յուրաքանչյուր մեքենայի համար արտաձվող օդաքանակը հաշվարկված է ըստ նրա հզորության եվ հանգրվանում շարժիչի աշխատելու ժամանակահատվածով: Օդի արտաձումը կատարվում է վերին և ներքին գոտիներից հավասարաբաշխ: Ավտոհանգրվանից և նկուղային հարկի պահեստներից իրականացվում է ծխահեռացում:

Հրդեհի ժամանակ ավտոկայանատեղի վերելակների հորանի և աստիճանավանդակի նախաարահներում նախատեսված են դիմհարման համակարգեր: Նկուղային հարկի պահեստային տարածքներում իրականացված է օդի փոխհատուցում հրդեհի ժամանակ:

Հակահրդեհային օդամուղերի գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակակենտրոնական վահանակից:

Էներգախնայողության և Էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ

Համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում:

Ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտահանիչներով օդի ներաձման համակարգեր, որոնք ապահովում են ջերմության բարձր խնայողություն:

Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

Մթնոլորտային օդ.

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են հետևյալ աշխատանքները.

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան, պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով. սորուն նյութերի պահեստները ծածկել

համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,

- որպես պարտադիր պահանջ ունենալ՝ շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացման, շինարարական հրապարակների պարսպապատման, ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերի և շինությունների համապատասխան բարձրության անփափանց թաղանթով ծածկման պահանջների նկարագրությունը համաձայն «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի: Նշված պահանջը պարտադիր ներառվելու է կապալառու կազմակերպությունների հետ պայմանագիր կնքելիս:

Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է յուրաքանչյուր շինարարական հրապարակին կից, որն իրենից ներկայացնում է պլաստմասե 25իսմ ծավալով տարողություն: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա:

Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:

Աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Կանաչապատ մակերեսը կազմում է 534,7 քմ: Կանաչապատման աշխատանքների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատվող տարածք կբերվի բուսահող: Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Կանաչապատման համար օգտագործվելու է թույա /7տնկի/, գնդաձև ակացիա /9 տնկի/ և այլ ծառատեսակներ, ինչպես նաև ծաղկասածիլներ և խոտի սերմ:

Քանի որ տեղանքում կա ոռոգման ցանց, ոռոգումն իրականացվելու է համապատասխան խողովակի օգնությամբ:

Տարածքում առկա քանդվող շինություններ չկան, առկա է միայն բետոնապատ հատված, որը քանդվելուց հետո օգտագործվելու է որպես հետլիցք, և շինարարական աղբ չի առաջանալու:

Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները իրագործվում են արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների սահմաններում և նոր տարածքներ գրեթե չեն ներառում:

Նոր կառուցապատվող տարածքների շինարարական աշխատանքների արդյունքում տեղի կունենա հողի բերրի շերտերի մասնակի վնասում (կառուցման փուլում), հողային զանգվածների փորման, հանման և տեղափոխման հետ կապված փոշու արտանետումներ, շինարարական տեխնիկայի շահագործման հետևանքով առաջացած այրման արգասիքներ և աղմուկ: Ազդեցությունների նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ և կազմակերպելով աշխատանքների մոնիթորինգ:

Հողածածկին պատճառված վնասները նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- շինարարության ընթացքում տարածքի բուսահողը հանվելու և կույտավորվելու է պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար,
- ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի,
- ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվում են խոտաբույսերով կամ իրականացվում են այլ միջոցառումներ՝ հողաթմբերի ամրացում, ծածկում և այլն:
- բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր:
- շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:
- կառուցապատումից ազատ տարածքում նախատեսվում է իրականացնել կանաչապատում համաձայն կանաչապատման նախագծի:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող հողի բերրի շերտը կկուտակվի տարածքում պահպանելու նպատակով : Հողի բերրի շերտի հանման, հանված բերրի շերտի պահպանումն ու օգտագործումը օգտագործումը իրականացվելու է համաձայն ՀՀ կառավարության 2017թ նոյեմբերի 2-ի N1404 որոշման :

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր: Այդ նպատակով մինչև գործունեության սկսելը համայնքապետին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնացվի աղբի և ավելացած գրունտի տեղափոխման վայրերը:

Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ դրանց բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեն նոր բների և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կկրեն լուրջ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղ-արկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, 2002 թվականի մարտի 6-ի թիվ 138 և 2006 թվականի մայիսի 17-ի թիվ 533-Ն հրամանների պահանջները:

Աղմուկ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝ շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում, պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

Մշտադիտարկումների իրականացման պլան.

Հասարակական նշանակության շինության շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
- Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
- Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
- Շինարարության ընթացքում հատված յուրաքանչյուր ծառի փոխարեն կտնկվեն նորերը: Թվով 5 հատված ծառերի փոխարեն տարածքում կտնկվեն թվով 16 ծառեր: Հատվելու են և կտրատվելու են 5 թեղիներ և թխկիներ, որոնց փոխարեն կլինեն նորատունկ ծառատեսակներ: Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար: Կանաչապատման աշխատանքների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատվող տարածք կրերվի բուսահող: Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Կանաչապատման համար օգտագործվելու է թույա, գնդաձև ակացիա և այլ ծառատեսակներ, ինչպես նաև ծաղկասածիլներ և խոտի սերմ:

Ամբողջ շինարարության ընթացքում բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է՝ մինչև չորս միլիոն ՀՀ դրամ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

| ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | ՊԱՐԱՄԵՏՐԵՐ | ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ |
|-------------------------|---|--|
| Ընդհանուր դրույթներ | Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն | <p>(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել</p> <p>Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն</p> <p>(c) ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:</p> <p>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</p> <p>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</p> |
| Շինարարական աշխատանքներ | Օդի որակ | <p>Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ</p> <p>(a) կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար</p> <p>Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝</p> |


| | | |
|-------------------------|--|--|
| | | <p>թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն</p> <p>(b) շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի</p> <p>(c) թույլատրվի:</p> |
| Աղմուկ | | <p>Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված</p> <p>(a) ժամերի միջակայքում</p> <p>(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:</p> |
| Թափոնների կառավարում | | <p>Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր</p> <p>(a) աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր</p> <p>(b) ունեցող աղբահավաքների կողմից Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես</p> <p>(c) ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p> |

**Տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լսումների /լսումների արձանագրություն
և տեսաձայնագրությունը/ և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական
համաձայնության վերաբերյալ**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (առաջին փուլ) 2023 թ. ապրիլի 27-ին, ժամը 11:00-ին տեղի են ունեցել «ՅՈՒՆԻՓՈՒԼ» ՍՊԸ-ի կողմից Երևան, Արաբկիր վարչ. շրջանի, Թբիլիսյան խճուղի 21/5 հասցեում նախատեսվող հասարակական շինության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային լսումներ: Հանրային լսումների վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն և հանրային լսումների ընթացքը տեսաձայնագրվել է: Տեղական ինքնակառավարման մարմինը՝ Երևանի քաղաքապետարանը տվել է իր նախնական համաձայնությունը, կատարել է դիտարկումներ՝ որոնք ընդունվել են և ներառվել են կատարվելիք աշխատանքների ծրագրում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕП/ЕЕА, 2009:
2. ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. հունիսի 21:
3. Շինարարական Կլիմայաբանություն 2011:
4. ՀՀՇՆ II 7.01-2011 ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
5. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
6. ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
7. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
8. ՀՀ կառավարության 02.02.2006թ բնակավայրերում մթնոլորտային օդը աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների նորմատիվները հաստատելու մասին թիվ 160-Ն որոշումը:
9. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
10. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
11. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
12. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
13. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
14. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
15. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
16. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.



ԳԾԱԳՐԵՐՈՒՄ ԼՇԿԱԾ ԵՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐ: ԲՈՒՈՐ ՉԱՓԵՐԸ ՍՏՈՒԳԵՆ ՏԵՂՈՒՄ: ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՐՈՒՄ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵՆՆԵՐ ԾԱՐՏԱՐԱՊԵՏԻ ՀԵՏ

| | | | |
|--|--|---|--------------------------------|
| 7/27/2023 4:34:19 PM | | Մեծ անվանումը | |
| ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԼՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ | | ՀՐԸԵԶ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄՈՏԵՑՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ | |
| Տախազոտար | Գլխավոր ճարտարապետ՝ Հ.Մամիկոնյան | Մասշտաբ | Ճարտարապետ՝ Ս.Եսայան |
| Տախազոտարի հասցեն | ՀՀ ք.Երևան, Կ.Արաբկիր, Թբիլիսյան խճուղի 21/5 | 1 : 500 | |
| Պատվիրատու՝ | <<ՅՈՒՆԻՓՈՒԼ>>ՍՊԸ | Փուլ | Արվեստանոցի ղեկավար՝ Ս.Ազատյան |
| Նախագծող ընկերություն՝ | "27 Architects" ճարտարապետական արվեստանոց | ԱՆ | ՏԻՆ. ԸՆԿ. Ի. 5 |
| | | ՏԻՆ. ԸՆԿ. Ի. ԵՃ. Ի. ԸՆԿ. Ի. ԸՆԿ. Ի. | ՏԻՆ. ԸՆԿ. Ի. ԸՆԿ. Ի. ԸՆԿ. Ի. |



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 8 դեկտեմբերի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՅՈՒՆԻՓՈՒԼ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Արաբկիր Թբիլիսյան խճուղի 21/5

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի առուվաճառքի 25/11/2021թ. ս/մ 11461 պայմանագիր

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-003-0404-0164

Մակերեսի չափը (հա)՝ 0.266046

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Խառը կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 08122021-01-0367, գաղտնաբառ՝ TB92BKDIQN2F

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|-----|----------------------|-------|----------|--------------------------|
| 1 | 01-003-0404-0164-001 | սրահ | 29.3 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 2 | 01-003-0404-0164-002 | հիմք | 253.1 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Ավարտվածության աստիճանը մինչև 50%:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱՐՇԱԿ ՇԱՀԲԱԶՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 08122021-01-0367, գաղտնաբառ՝ TB92BKDIQN2F

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Երևան քաղաք
Արաբկիր վարչական շրջան
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 01-003-0404-0164
Մասշտաբ 1: 500





Կադաստրի
կոմիտե



սպասարկման գրասենյակ

Երևան քաղաք
Արաբկիր վարչական շրջան
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 01-003-0404-0164
Մասշտաբ 1: 2000



սպասարկման գրասենյակ

| | Կոորդինատներ | |
|----|--------------|--------------|
| | X | Y |
| 1 | 8460967.3960 | 4455330.1882 |
| 2 | 8460951.4320 | 4455315.7957 |
| 3 | 8460935.4905 | 4455301.3479 |
| 4 | 8460959.5200 | 4455273.1400 |
| 5 | 8460962.3200 | 4455267.8300 |
| 6 | 8460964.1051 | 4455264.4364 |
| 7 | 8460966.6880 | 4455259.0291 |
| 8 | 8460969.2708 | 4455253.6218 |
| 9 | 8460975.2386 | 4455245.8941 |
| 10 | 8460975.9881 | 4455244.9236 |
| 11 | 8460999.8311 | 4455261.3243 |
| 12 | 8461003.6816 | 4455263.9505 |
| 13 | 8460985.5388 | 4455297.0693 |



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 01/18-07/1-Դ-27494-686

« 03 » 08 2022թ.

Table with 2 columns: Field Name and Value. Fields include: Օբյեկտ (Հասարակական նշանակության շինության /գրասենյակային/ կառուցման), «Աշխատանքային նախագիծ» (ՀՀ կառավարության 19.03.2015թ. հ.596-Ն որոշման N4 հավելվածի N2 և N3 ցանկերով տրված չափորոշիչներից ելնելով III կամ IV դիսկալնության աստիճան), Գտնվելու վայրը (Արաբկիր վարչական շրջան, Թբիլիսյան խճուղի հ.21/5), Կառուցապատող («ՅՈՒՆԻՓՈՒԼ» ՍՊԸ (ք. Երևան, Ա. Խաչատրյան փողոց հ.31 շենք, հ.31 բնակարան, հեռ. 098-38-28-29)), Առաջադրանքի տրամադրման հիմքը (Կառուցապատողի չ/ա Ստեփան Եսայանի հայտը, Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Արամ Ազատյանի 20.07.2022թ. հ.Ն/14429-22 գրություն, Թբիլիսյան խճուղի հ.21/8 հասցեի սեփականատեր «Էգեոն Պարիսպ» ՍՊԸ-ի, Թբիլիսյան խճուղի հ.21/4 հասցեի սեփականատեր Հայկ Բաբուխանյանի և Անահիտ Սեդրակյանի, Թբիլիսյան խճուղի հ.21 հասցեի սեփականատեր Հայկ Օհանյանի համաձայնագրերը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.08122021-01-0367 վկայականը, նախագծի էսքիզային առաջադրելը), Առաջադրանքի գործողության ժամկետը (Երեք տարի):

Ն Ա Մ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ը

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

- 1. Հողամասը գտնվում է Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն, կադաստրային ծածկագիրը՝ 01-003-0404-0164:
2. (*) Հողամասի չափերը 0.266046հա:
3. Հողամասի անկա վիճակը 1) 29.3քմ՝ մակերեսով սրահ և 2) 253.1քմ՝ մակերեսով հիմք:
4. (*) Տրամադրության պայմանները Թբիլիսյան խճուղի:
5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ Նախագծվող և կից տարածքներում անցնող ինժեներական գծեր և հաղորդակցուղիներ:
6. (*) Կից հողամասեր Հասարակական և բնակելի կառուցապատման համար նախատեսված հողամասեր:
7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) Առկա չէ:
8. (*) Հատակագծային սահմանափակումներ Չկա:

Ն Ա Մ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ը

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

- 9. Ճարտարապետահատակագծային պահանջներ Մշակել Թբիլիսյան խճուղի հ.21/5 հասցեում հասարակական նշանակության շինության /գրասենյակային/ կառուցման աշխատանքային նախագիծ՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.08122021-01-0367 վկայականով ամրագրված հողատարածքի սահմաններում:
9.1. (*) Օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) -----
9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) -----
9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) Երեք տարի նախագծել մինչև երեք հարկ՝ նկուղային հարկով: Առավելագույն բարձրությունը նախատեսել մինչև 13.5մ տարածքի վերին հատակագծային նիշից:
9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)
9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (ամբարակցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) Մինչև 80%:
9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) 20% և ավելի:

9.7. այլ պահանջներ

- Հարևան շինություններ ուղղված ճակատներում բացվածքներ նախագծել նորմատիվ հեռավորությունների ապահովման դեպքում:
- Նախագծով լուծել ավտոտրանսպորտի անվտանգ ելումուտի և կայանման խնդիրները:
- Տանիքը հնարավոր է նախատեսել հարթ կամ փոքր թեքությամբ՝ հնարավոր է շահագործվող, ջրահեռացումը կազմակերպված:
- Նախագծով ապահովել հարակից շինությունների և հողամասերի հետագա շահագործման նորմատիվային պահանջները:
- Նախագծով հնարավոր է նախատեսել միաշարիկ օժանդակի շինություններ (պահակակետ և այլն):
- Նախագծով հիմնավորել ՀՀ կառավարության 19.03.2015թ. հ.596-Ն որոշման N4 հավելվածի N2/N3/ ցանկով տրված չափորոշիչներից էլենելով կատարվող շինության ռիսկայնության աստիճան, նշել աշխատատեղերի քանակը, կառուցապատվող շինության ընդհանուր մակերեսը չափերի և սեկյակների նշանակության նշումով /սեկյերի մասնագրերը/:
- Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները:

10. Հոդվածում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

Քանդման ենթակա 1) 29.3քմ՝ մակերեսով արան և 2) 253.1քմ՝ մակերեսով հիմք:

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում

Կցվում է:

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում

Կցվում է:

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

Կցվում է:

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադրիչը

(համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

12.6. աղբահանություն

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

Կազմակերպել տարածքի ջրահեռացում:

(տեխնիկական կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

Տարածքը բարեկարգել և կանաչապատել, հնարավոր է պարսպապատել:

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցամաքապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր

Երկաթբետոն, մետաղ, ապակի, քարե շար, երեսապատման բարձրորակ նյութեր:

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ձակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ

(արտակարգ իրավիճակներում մարդկանց օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ

Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները:

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Համաձայնագրերի և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

Նախատեսել հաշմանդամների և ՖՄՄ-երի կենսագործունեության ապահովմանն ուղղված միջոցառումներ՝ նախագծումը (սարքավորման և կանաչապատման ընտրությունը) կատարելով ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար» շինարարական նորմատիվ փաստաթղթերի պահանջների համապատասխան:

19. Երջակա միջավայրի պահպանում

(ըրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 12.04.2001թ. հ.286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ԺԲ» ենթակետի և 44.1 կետի պահանջները, ինչպես նաև՝ Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ.405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները:

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անվտանգ աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

Երեք տարի:

(Նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

Լ Բ Ա Յ Ո Ւ Յ Ի Չ Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ը

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2 հավելվածի պայմանների և N 4 հավելվածի N 2 և N 3 ցանկերով տրված չափորոշիչներից էլենելով

- Պարզ փորձաքննություն - /III-րդ կատեգորիայի դեպքում/
- Պետական համալիր փորձաքննություն - /IV-րդ կատեգորիայի դեպքում/:

(Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էրիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումներ

• Համաձայնեցում Երևանի քաղաքապետի հետ:

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բույսերի պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ

Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Տ.